552 Աղոթում եմ ես ու սպասում եմ Քեզ,

1. Աղոթում եմ ես ու սպասում եմ Քեզ,
Պատասխանի՛ր ինձ, իմ Տեր Աստված,
Նորոգի՛ր հույսս, նորոգի՛ր ուժս,
Որ մնամ Քեզ հետ ես հավիտյան:

Քո այցելությունն է տալիս ինձ կարողություն,
Քո օգնությունն է տալիս մխիթարություն,
Եղի՛ր միշտ ինձ հետ, սիրելի՛ իմ Հիսուս:

2. Կատարյալ ես, Տե՛ր, ու արդար ես, Տե՛ր,
Քո բոլոր ճանապարհների մեջ,
Հաստատի՛ր Քո սուրբ Խոսքը սրտիս մեջ,
Թող հավատքով հաստատվեմ Քո մեջ:

3. Խրատի՛ր ինձ, Տե՛ր, ու շտկի՛ր ինձ, Տե՛ր,
Քո մեծ սիրով՝ հայրական ու ջերմ,
Որ չսխալվեմ ճանապարհիդ մեջ,
Որ ապրեմ անսխալ կամքիդ մեջ: